

ՄԵԾ ԶՈՒԲԵԼԵԱՆԻ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ



ՊԱՆՏՐՄԱՅԻ ՄԷՋ

(Սեփական քրթակցութիւն)

ՊԱՆՏՐՄԱ, 22 Հոկտ. 1913

Պանտրմացիները յորեւեանական մեծ տոնի հանդէսը աննախընթաց շուքով ու վայելչութեամբ կատարեցին ամսոյս 20ին կիրակի օր:

Աստուծոյ պատարագեց հանդիսաւոր կերպով և խուռն բազմութեան մը ներկայութեան վիճակիս Առաջնորդ Կարապետ Սրբազան Հայրը, Եկեղեցւոյ աւարտումին Սահակ և Մեսրոպ վաստակաւոր վարդապետներուն և համայն հին ու նոր զրականութեան ռաւփրաններուն յիշատակին համար կատարուեցաւ փառաւոր հանդստեան պաշտօն մը:

Շարաթ օրէն իսկ յինուած էին յաղթական երկու կամարներ՝ Սահակ և Մեսրոպ վերտառութեամբ, չափազանց շքեղ եկեղեցւոյ զրան առջև: Դէմը դանուող Հնչակեաններու աղուներն ալ ո՛չ նուազ շուքով զարդարուած էր: Նոյնպէս կը փայլէր Ազգ. Առաջնորդարանը իր զարդարանքով, որոնք լուսազարդուած էին նոյն գիշերը մինչև ժամը 10:

Կիրակի կէս օրէն վերջ ժամը 2.30 (Ը. Ե.) բացուեցաւ հանդէսը Առաջնորդ Ս. Հօր աղօթքով. ապա երգուեցաւ դաշնակով «Յորեւեանակ երգը»: Հետզհետէ բանախօսեցին Տօքթ. Սարգիս Արիւնկիրեան, որ նիւթ ունէր «Հայ զրականութեան զարթնումը և Սահակ Մեսրոպեան տառերուն հայ ուսանողներու վրայ ըրած ազդեցութիւնը», տեղւոյս ազգ. երկեսն վարժարանաց տեսուչ Կարապետ էֆ. Տէմիրեան, որ թուեց հայ մեծ դէմքերը և կառավարութեան մէջ ունեցած մեծամեծ պաշտօնատարները: Ազգ. վարժարանի ուսուցիչներէն Գուրգէն էֆ. Գալայճեան, որ դրուատիք ըրաւ հայ զրականութեան, Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան կողմէ Պ. Արծրունի, որ զըլխաւորաբար ծանրացաւ ազգի մը զխաւոր ազդակներուն վրայ, Պալլքէսիրի առաջն. փոխանորդ Տ. Նշան քննչ. Բարունակեան, որ թուրքերէն լեզուով պատմականը ըրաւ հայ գրերու քիւտին 1500ամեակին և հայ տպագրութեան 400ամեակին:

Թուրք հրաւիրեալներէն ներկայ էին Գայիմալամ պէյըր Ալայ զօմանտանին, Թաղապետութեան րէյիլը, ինթիխապ րէյիլին, զօմիսէր մուսափինին:

Յոյնեւ և կողմէն Մետրապոլիտի փոխանորդը և Գօզմա էֆէնտին: Կաթոլիկ Հայերը չէին պատասխանած մեր հրաւերին, իսկ Բողոքական Հայերը ներկայացուցիչ ունեցած չըլլալուն պաշտօնապէս ո և է անձէին զրկած, Երգուեցան նաև քանի մը աւուր պատշաճի երգեր:

Հանդէսը փակուեցաւ ժամը 5ին (Ը. Ե.) Ս. հօր կողմէ, որը ի վեր հանեց Սահակ և Մեսրոպ վաստակաւոր վարդապետներուն յիշատակին ձօնուած այս մեծ տօնին նշանակութիւնը և հրաւիրեց ժողովուրդը մասնակցելու անպայման իր կարողութեան չափով կրթական ֆօնտին, որ պիտի լրացնէր Հայուն կրթական մեծ պահասը:

Հանդէսը սկսելուն եկեղեցւոյ զրան առաջ դանուող այր ու կին, յանձնաժողովոյ անդամներ զօգարտներ բաժնեցիլ՝ ժողովուրդին, ստանալով անոնց փոխարէն կրթական նպաստ մը:

Դեռ րուն հանգանակութեան չէ սկսուած, մասնաւոր կերպով պատրաստուած 500 Սահակ և Մեսրոպի պատկերները կրող թաշկինակները պիտի վաճառուին ի նպաստ կրթական ֆօնտին: